

Ս. Եջմիածնի միաբանութեան մեծ թուի վերաց:

«Մեծ ու փոքր հինգ հարիւր միաբան են,
Աջով խաչով սիրուն պատարագ կանեն...»
նոցա սիրալ զուարձանումէ գեղեցիկ հոգելոր
հանդէսներով և ժամասացութեամբ.
«Ժան երկու եպիսկոպոս թափօր արաւ,
Տիրացուների ձայնը խելքս տարաւ».
Առումէ աշուղ Միսկին Բուրջին. նոքա դո-
վում են Հայոց հոգեոր Տիրոջ Ա. Լուսա-
ւորչի փոխանորդի պատկերը, աթոռը զգես-
ալը կատարած արարութիւնները. «Եջ-
միածին խիստ գովական զանազան, բացա-
դանչումէ աշուղ Պազարը ծառայ եմ քո
սուրբ աթոռին Արքազան, մի հենց պայ-
ծառ կուփային նման է արեգական, չորս կողմն
լաջիվարդ քաշած կու երեայ զարմանազան,
աջիդ ունես լալ ու եաղութ ալմաստ թրաշ
սուրբ զաւազան, Եփրեմ սուրբ կաթուղիկոսն
խիստ գովական զանազան» Ա. Երջադէս նոցա
զմայլեցնում են Ա. տաճարի ներքին շուքն ու
պայծառութիւնը. Միսկին Բուրջին երգումէ՝

«Եջմիածին խիստ սիրուն պայծառ տեսի,
Երկու հարիւր կանթեզ, յիսուն ջառ տեսի,
Դիմի ամենը ջերկա ջերկա վառ տեսի,
Ա. աթսուն աւել հենց ոսկի բուրփառ տեսի,
Երեք հարիւր ոսկեկապ շուրջառ տեսի,
Ոսկի արծաթ պատկեր է ամեն պատը,
Արշումէ խալիչքն զառ տեսի».

Աշուղ Պազարն երգում է.

«Գիշերահանց քաղցր ձայն կուտայ,

Կու բացուի դրախտի դուռն,

Միջին բազմացրած է

Լուսաւորչու աջոյ կուռն,

Ոսկէ դալամով քաշած է

Գիւլիստանի վարդն ու սիւմբիւն

Ոսկէ մարմար սուրբ սեղանն

Խիստ գովական զանազան»:

Թէպէտե այսօր աշուղների այս նկարա-
զած պայծառութեան միայն ազօտ հետքերն
են երեսում, որովհետեւ աւելի աչքի են ընկ-
նում Ա. Եջմիածնի տաճարի խամրած նկար-
ները, խոնաւութիւնից անշքացած կաւար-

ները և նոյն իսկ եկամուտ անձաշակ զարդերն
ու անօթները, սակայն առանց երկմտութեան
կարելի է ասել որ այդ վիճակը ժամանակաւոր
է եղել և ժամանակաւոր էլ կը մնայ և ոչինչով
չի կարող նսեմացնել Ա. Եջմիածնի խսկական
փառքի պայծառութիւնը, քանի որ նորա հիմունքը
հաստատուած են ոսկի անապական
խարսին վերայ անշարժ և անդրդուելի և նորա
անձախելի նիւթերից կաղմաւած յօրինուած
շնորհ պսակուած է մի մեծ լուսաւոր խաչով,
որ միշտ տեսանելի կերպով փայլել է և կրփայի
Ա. Լուսաւորչի արժանաժառանդ յաջորդի ճա-
կատին:

Կ. Կ.



ԲԵԹԵԼ. ԱՆԿԵԼԱՆՑՅԸ ԲԻՒԵՖԵԼԴԻ Մ08:

Պաստոր Յոդելշվինգի գործունէութեան
մասին Արարատի այս համարում լոյս տեսնող
լուրը ստիպում է ինձ վերականգնել յի-
շողութեանս մէջ այն տպաւորութիւնները,
որ ընդունել եմ մի տարի առաջ նորա հիմ-
նարկած բարեգործական հաստատութիւն-
ները այցելելով և աշխատել մի թեթև գա-
ղափար տալ քրիստոնէական ոգու քաղա-
քակիրթ աշխարհի մէջ ներկայում իսկ կա-
տարած հրաշքների մասին:

Անցեալ ամառ Մարգուրգի համարի գործ.
աստուածաբանութեան ուսուցչապետ Ա-
խելիս մի դասախոսութիւն էր կարգում
«Ներքին Միստիոնի» * մասին և իւր ունկն-
դիրներին գործնական քրիստոնէութեան մի
կենդանի օրինակ ներկայացնելու համար ճա-
նապարհորդութիւն յանձն առաւ նոցա հետ
դէպի գերմանից ամենանշանաւոր բարեգոր-
ծական հաստատութիւններից՝ մէկը բեթէլ
անկելանոցը, բիւթէլդ քաղաքի մօտ վեստ-
ֆալիայում; Ես ես մէկն էի նորա ուղեկից-
ներից; Մեղ ամենայն սիրով հիւրընկալեցին
այնաեղ և մէկ ու կէս օրուայ մէջ մենք
այնքան բան տեսանք, որ կեանքիս ամենա-

* Կաշխատնց մի ոքից անգամ պարզել, թէ ինչ
է ներքին Միստիոնը:

թանկագին ժամանակներից կարող եմ համարել այդ ճանապահն հորդութիւնը:

Քեթէլ անկելանոցի հիմնագիրը՝ պատոր փոն Բոդելվինգ, պրուսական նախարարի որդի է և սննդակից է եղել հանդուցեալ Ֆրիդրիխ կայսեր, որ մինչև մահը բարեկամական դուռ ուղարկել է իսոսում նորա հետ: Փարիզում գերմանական համայնքի Պաստոր կարգուած լինելով՝ նա մի շաբաթուայ ընթացքում զրկուումէ իւր բոլոր և որդիներից և ուխտումէ կտօջ հետ իւր ողջ կեանքը մարդկային ամենամժշտուառ և շատ տեղեր բարձի թողի արուած մի գասակարգի, ընկնաւոր (Էպիլեպտիկ) հիւանդների խնամելուն նուիրել, և այդ նպատակով կառուցանումէ 1866 թ.-ին սեփական միջոցներից անկելանոցի առաջին տունը, ուր և զետեղուում են յաջորդ տարին առաջին Յ հիւանդներին: * Այս այս հիմնարկութիւնն է, որ աճելով այժմ հսկայական չափերի է հասել: Նա խնամումէր անցեալ տարի իւր յարկի տակ 1,447 ընկնաւորներ և ուրիշ մի քանի հարիւր յիմարիներ, անդամալոյներ, որքեր, որոնցով զբաղուած են 5 պաստոր, 8 բժիշկ, 66 տներէց 71 տարկաւագա, 60 տարկաւագուհի, 34 ծառայ և 95 աղախին: Եւ այս ամէնը յառաջ է եկել մի մարդու ջանքով միայն, որ ահագին տարածութեամբ գետին է ձեռք բերել մի այնպիսի տեղում: ուր հողը թղերով են գնահատում: մօտ 130 մեծ ու փոքր շէնքեր է կառուցել նորա վերայ, ամեն տեսակ յարմարութիւններ, կարգ ու կանոն ստեղծել՝ տասնեակ հազարներ մարդոց ** թշուառ կեանքի գառնութիւնը ամոքելու համար:

Նա միլիոններ չունէր ի հարկ է և այն ահագին գումարները, որ այս հաստատու

* Բողեւավիճակ արդար Յորի նման վարժատումէ կրկն Տիրութիւն համբերատար սիցոյ համար, նա հայր է այժմ կրկն և հատուն զաւակների:

** Վերեւ տուած հիւանդների թուից ոսկի եղբակացութիւն հաննըլու համար աէտոք է չմոռանալ, որ նորա վեանդներ են և մահը անդակար նոցա մէջ տեղ է բաց առում նորերի համար:

թեան վերայ հարկաւոր էր գործ գնել կոպէկ կոպէկ ժողովել է բարեգործ անձերից, դիմելով անդադար մէկին միջոին. գուրուզ զանազան միցոցներ գործ դնելով հաստատուն եկամուտներ ձեռք բերելու համար, ներսը տնտեսելով և արդիւնագործելով ձեռք բերածը, և երբ այսօր քրքրում եմ այն տեղեկագիրները, որ Քեթէլից հեռանալիս մեզ տուին՝ մանրամասն տեղեկութիւններ ունենալու հաստատութեան մատին, ոչ մի խօսք ոչ մի տեղեկութիւն չեմ գտնում այնտեղ իրեն, այդ բուրբի հեղինակի մասին: Աչքի անցնելով կամ անձամբ գրելով բոլոր թղթերը, նա թոյլ չէ տալիս իւր սառարդբեալներին, որոնցից շատերը գրեթէ պաշտումեն նորան, որ և է գովասանք այդ էլ անցողակի կերպով մեր առաջնորդները ասացին: Այսպիսի մաքուր համեստութեամբ զարդարուած քրիստոնէի սէրը և կարող էր միայն այն հրաշալիքը յառաջ բերել որ մենք Քեթէլում տեսանք:

Խնչպէս կեդրոնական շէնքը, որի անունով ամերող հաստատութիւնը Բեթէլ է կոչուում: այնպէս և անկելանոցի միւս կարեւոր շէնքերը մի մի անուն ունին ուրբը Գրքից վերցրած, որոնք այդ շէնքերի նշանաբանն են ցոյց տալիս և որոնցից շատերը իրենք հիւանդներն են դրել: Բեթէլում ուր մօտ 250 ընկնաւոր աղջիկներ են ապրում: գտնուումէ է նաև կենդրոնական խոհանոցը և ճաշարանը, 700 հսկու համար կերպակուր է պատրաստուում այդ տեղ: Մեր հիւրընկանները ցանկութիւն յայտնեցին, որ մենք ևս ընդհանուր ճաշարանում հիւանդների հետ մէկ տեղ ճաշենք, նոյն ճաշից, ինչ որ նոքա են վայելում, և մենք սիրով յանձն առանք: Պէտք է մատածել, թէ ի՞նչ զգացումներով ճաշել կարող է մէկը մի քանի հարիւր ընկնաւորների մէջ նստած, որոնցից շատերը բոլորովին ապուշ են արդէն, անհանգիստ շարժումներ են անում: տարօրինակ ձայններ արձակում գալիս սիրովիր խօսակցութիւն

են բայց անում քեզ հետ լորձինստ ձեռ-
նիրով ողջունում և ինչպիսի ինչպիսի կար-
գապահութիւն պէտք է տիրապետէ այդ-
տեղ, որ առանց նողկալու կարելի լինի նո-
ցա մէջ նստել: Մենք նստանք և նոյն իսկ
ախորժակով ճաշեցինք, այն հանգստութիւնը
այն բարեկամական անկեղծ արտայայտութիւ-
նը, որ այստեղ նկարուած է ամէնքի գէմքե-
րի վերայ, այնպիսի մի խորը պատկառանք և
անրացատրելի զգացում են ներշնչում որ սի-
րով ու հանգիստ սրոտվ ես նայում ամէն բանի
վերայ, ճնշուած ի հարկ է մարդկային թըշ-
ուառութեան այդ խլճալի տեսարանի ներ-
քոյ, բայց և զօրացած ու բարյապէտս կազ-
գուրուած՝ ոիրոյ և անձնութրութեան ամե-
նագեղցիկ օրինակներ աչքի առաջ տեսնե-
լով, զգալով մարդկային արժանապատուու-
թեան բոլոր վսեմնութիւնը, որ եղբայրը իւր
դժբաղդ եղբօր օգնելուն, իւր անձը նորա
համար գնելուն մէջ ցոյց է տալիս:

Ճաշարանում, ինչպէս և ամէն տեղ,
իւրաքանչիւր փոքրիկ խումբ ընկնաւորների
մօտ կայ մի վերահսկող, որ իսկոյն վրայ է
համում: Երբ հիւանդի ջղաճութիւնները
բռնում են, մտերմաքար խօսում մսիթարում
է ամէնքին, զարմանալի համբերատարութեամբ
տանում նոցա քմահաճութիւններին, իւր
ձեռքով կերակրում շատերին ինչպէս երե-
խաների, հանդարտեցնում նոցա յուղուած
կըքերը և չնչին բաներով գոհացում տալիս:
Եւ այդ պահապանները բոլորն էլ կամաւր,
առանց որ և է վարձի ակնկալութեան են
անկելանոց մոել, ամենածանր և գժուարին
ծառայութիւններ յանձն առել: Միայն ստո-
րին, մեքենայական աշխատութիւնների հա-
մար այս տեղ վարձկան բանուորներ կան. Հի-
ւանդներին խնամելու բոլոր գործը կամաւր
ծառայողների վերայ է, որոնք առնուած են
ժողովուրդի թէ բարձր և թէ ցածր գասա-
կարգերից, 20-22 տարեկանից վեր, իրենց կա-
տարեալ հասակի մէջ, և կրթուում են այստեղ
նոյն կերպով, նոյն պաշտօնի համար հաւա
սարտուէս, ծառայելով ի հարկ է այնուհե-

տե այնպիսի գործի, որ աւելի յարմար է
իրենց անհատական բնդունակութիւններին
և տրամադրութեան: Սակայն նոքա պատ-
րաստ պէտք է լինեն հարկաւոր դէպքում
ամէն տեսակ դործ կատարել՝ անքուն գի-
շերներ անցնել մահուան անկողնի մօտ, հրս-
կել անզուսպ խելագարների, անձամբ աշխա-
տել մաքրութեան վերայ:

Խնչպէս նախնական եկեղեցու մէջ հի-
ւանդներին և աղքատներին խնամազները
սարկաւագ և սարկաւագու՞ի էին կոչուում
այնպէս և այստեղ: Սարկաւագների կեղրու-
նավայրն է Նազարեթ կոչուած տունը, ուր
սահնում են հաշմանդամ և ընկնաւոր տը-
ղաներ և ուր վերև յիշուած, բուն իսկ բե-
թէլում ծառայող, 71-ի հետ մէկ տեղ պատ-
րաստուում և ուղարկուում են զանազան
կողմեր մօտ 240 եղբայրներ նոյն բարի գոր-
ծով զբաղուելու ուրիշ հիւանդանոցներում:
Աւելի բազմաթիւ են սարկաւագուհիները,
մօտ 600 թուով, որոնք տարածուած են աշ-
խարհիս զանազան մասերում: մինչեւ Աֆրիկայի
խորքերը՝ տառապեալ մարդկութեան կարե-
լից լինելով: Նոցա մայր տունը Սարեփթա է
կոչուում: որի կեդրոնում գտնուում է մի գե-
ղցիկ մատուռ և գորա շուրջը չորս մեծ սեն-
եակներ հիւանդների համար: Ժամերգութեան
միջոցին բացուում են մատուռի գէպի այդ
սենեակները նայող լուսամուտները և անշար-
ժութեան գատապարտուած հիւանդներ կա-
րող են իրենց անկողիններից լսել Աստուծոյ
խօսքը և փառաբանակից լինել նորան: Աւե-
լորդ է կրկնելի որ առ հասարակ բոլոր հաս-
տ ստութեան մէջ թագաւորողը քրիստոնէտ-
կան ոգին է. և մանաւանդ այնպիսի հի-
ւանդների համար, որոնք աւելի հոգւով են
տիար և որոնց վերայ թժշկական միջոցները
շատ քիչ են ազգում՝ բուժիչ և մսիթարիչ
հանդիսանում են իսկապէս ուշը և խաղա-
ղութիւն ներշնչող քոյրերի և եղբայրների
գէմքերն ու ձայնը: Պէտք է տեսնել ինչպի-
սի հրծուանքով «պատա», պատա» կոչելով
իւեն Բոգելլինգի մօտ են վազում և նո-

րան շրջապատում խեղճ լնկնաւոր, կիսասպուշ մանուկները, և ինչպիսի հայրական գըթավ և գգուանոք խօսում փայտիայում է նա ամենքին: Այս հիւանդներից ամենաթըշուաներն անգամ: Օրոնց մէջ գրեթէ ամէն զիտակցութեան նշան սպառել է, մատչելի են սիրոյ լեզուի համար: Նոցա անմիտ աչքերի մէջ անբացատրելի մի քնքոյց զգացում է փայլում: Երբ նորա սիրով և անձնուիրութեամբ իրենց խնամող ձեռքի մերձաւորութիւնը զգում են, և ամենանզուսպ և քմահաճ հիւանդները, որոնց ոչ մի արտաքին միշոյով մեղմացնել չի կարելի: Գառան նըման խաղաղում և հպատակում են, երբ նոցա ականջին է զիպչում: Իրենց ծանօթ սարկաւագուհու թովիչ ձայնը: Բարեգործական հիմնարկութիւններ և մասնաւորապէս հիւանդանոցներ ես շատ եմ տեսել քաղաքակրթուած, Խրոպայում շատերն օրինակելի իրենց մաքրութեամբ և օրինապահութեամբ: Բայց թեթէլ մի առաւելութիւն ունի: Օրով նա գերազանցում է շատերին՝ թշուառութեան այս ծովի մէջ գուք գրեթէ մի տիսուր կամ մըռուայլ գէմք չէք տեսնի: Ամենքը զուարթ են: Ամենքը համբերատար, և այս այն պատճառով, որ ամենքին կապող, ամենքին կենդանութիւն տուող մի հոգի կայ այստեղ, բոլոր հաստատութիւնը շնչում է կարծես նոյն ոգուով, որով լեցուած և բարախում է հաստատութեան ղեկավարին պաստոր Բողելզինդինդի կուրծքը: Սակայն ոչ Բողելզինդ ոչ մէկ ուրիշը կարող էր ինքն իրենից, իւր զուտ բնական միշոցներով այդպիսի մի ոգի, այդպիսի կեանք արտագրել: Նա արզիւնք չէ իմաստասիրական հայեցողութիւնների և ոչ բարոյագիտական սկզբունքների: Ի ըսկը ըստանէ անտի նա չէ եղել աշխարհում: Այլ յառաջ է եկել և բեղմնաւորել միայն այն տեղ, ուր երկնաւոր սիրոյ շողեր կաթել են անմահութեան խաչի վրայից: Այդ համոզմամբ է նաև, որ ինքը Բողելզինդ այնպէս խոնարհ է ու համեստ և արժանիքը իրեն չէ վերագրում: Այլ փոռք է տալիս գթա-

ռատ Հօր, որ միջոց է լնարել նորան նոր բարի կամքը գործագրելու՝ կենդանի վկայ կարգելու: Նոր ողորմած սիրոյ համար:

Հաս հետաքրքիր է Բողելզինդին իւր սարկաւագների շրջանում ևս տեսնել: Երբ նա այդ չոփահաս, երբեմն միջին հասակից էլ աւելի անց մարդոց զանազան կրօնական բարոյական գիտելիքներ է աւանդում: Արոնք ուրիշ գործնական պարագմունքների հետ մէկ տեղ անհրաժեշտ զէնք են նոցա գործունէութեան համար: Խնչողիսի՞ ճարտարութեամբ գիտէ նա բոլորի ուշըը գրաւել, հայրական սիրով խրատել ամենքին և յանդիմանել ուր պէտք է, ամէն մի ասթից օգնութ քաղել նոցա զուտ քրիստոնէական սգի, բարձր բարոյական սկզբունքներ ներշնչելու, անհատական և ընկերական կեանքի և իրենց կոչման վերաբերեալ ամէն տեսակ կանոններ հաղորդելու: Հետաքրքիր է նորան տեսնել նաև եկեղեցւոյ մէջ քարոզելիս կամ իւր հիւանդների համար աղօթելիս: Բեթէլ անկելանոցը Սիոն անունով մի գեղեցիկ եկեղեցի ունի: Օրի հիմն օրհնելիս յորգառատ անձրեկ տակ ներկայ է եղել կլսաբաց Ֆրիդրիխ կայսրը (այն ժամանակ կեռ թագաժառանգ) և, իրեւ ճշմարիտ զինուորական, չէ յօժարել ոչ մի կերպ հովանոց ուանի: Խնչ խօսք, որ այսօր շրջակայքում մեծ ու փոքր ախորժակով պատմաւմ են իրենց վաղամեռիկ սիրեցեալ կայսեր այս օրինակելի արարմունքը: Եկեղեցու բեմի Յ մեծ նկարէն լուսամուտները ընծայ են գերմ: Յ կայսրների (Վիլհէլմ Ա. Ի. Ֆրիդրիխի և Վիլհէլմ Բ. Ի.), իսկ բաւն եկեղեցու շինութեան, բացի զրոխ տեղացող նուիրաբերութիւններից, գործակցել են մեծապէս և իրենք հիւանդները, իւրաքանչիւրը ըստ իւր կարողութեան: «Հաղի թէ աշխարհիս վերայ, ասում է Բոդ, մի ուրիշ եկեղեցի գտնուի, որ այնքան կամաւոր ճարտարապետներ ու նեցած լինէք որքան այս: Ժամանակ է նկատելու, որ նորա կլսաւոր սկզբունքներից և նորա մեծ յաջողութեան գաղտնիքներից մէ-

կըն էլ այն է, որ իւր հաստատութեան մէջ ոչ մի պարապ ձեռք չպէտք է գտնուի. ամէն ոք, որ գոնէ մի ձեռքը կամ ուղը շարժելու կարողութիւն ունի, պարտաւոր է գործել այստեղի իւրաքանչիւրը իւր ընդունակութիւնների համաձայն և իւր չափով: Բացի այն, որ աշագին հաստատութեան մէջ գործածուած ուտելեղէնի և հազնելիքի պատրաստութիւնը հիւանդների օգնութեամբ է տեղի ունենում: սեփական արշեստանոցների մէջ են պատրաստուամ կաչ կարսիք և ամէն տեսակ գործածութեան իրեղէններ, անկելանոցն ունի նաև ընդարձակ աղիւսարան, որ թրծած աղիւս է մատակարարում սեփական բազմաթիւ շինուածների համար, և գեղեցիկ կաւեղէն ամաններ պատրաստելու գործարան, որի արդիւնքը ի վաճառ է հանուում նա և գուրսը: Այս բոլորի մէջ բանողները հիւանդութեան մէջ շատ առաջ զգնացած ընկնաւորներ են: որոնց մի մեծ մասն էլ պարապում է գաշտային աշխատանքներով, հող մշակելով անկելանոցի սեփական ագարակներում և անբերը հողեր մշակելի գարձնելով: Սակայն այս կողմից տմենահետաքրքիրը «կտորտանքի տուն» է: Փրկիքը 5 հաղարին հայով կշացնելուց յետոյ հրամայել էր իւր աշակերտներին մնացած կտորտանքը ժողովիլ և լիովին որ մի փշուր գետին ընկնի: Եւ ահա բոդելզինգ այդ սկզբունքով ժողովիլ է տալիս ներսից և գրսից ամէն տեսակ փշուրներ և պէտքական գարձնում: Գերմանիոյ զանազան կողմերից երկաթուղով առանց ճանապարհածախսի, այստեղ են ուղարկուում անպէտք իրերով: մաշուած հանգերձեղէնով, մետաղների, թղթի կտորտանքով լի արկդներ և ծրաբներ, զտուում մաքրուումն մեծ մասամբ այնպիսի հիւանդների ձեռքով որոնք ուրիշ որ և է գործ կտորտանքու անընդունակ են, և ապա նորոգուելով և կամ նոր իրեր շինելու համար գործ գրուելով սեփական արշեստանոցներում՝ կրկին վաճառ են հանուում:

23, 862 մարկ 18 ֆ. (մոտ 11 հազար բռնքի) արդիւնք է ոստացել իւր արհեստանոցներից։ մեր աշխարհի մարդու համար մի անհաւատավի գումար արդարեւ, բայց քաղաքակիրթ երկրներում ուր ամէն ինչ գործ դնել կարելի է, զա ոյնքան էլ զարմանալի չի թուի։ Կոտրատուած երկաթէ գրիշները երբ փութերով են հաւաքուում՝ կրկին իրեն երկաթ գործ դրուել կարող են, շորի կտորներից թուզիտ են պատրաստում։ ապակու, շշի կտորներից ապակարուու, պատուած գրքերի, ամսագիրների միջից պատկերներ հանում։ ճաշակաւոր կերպով իրար են կրպուում և զիւզացի երեխաների համար աժանագին խաղի տեսարակներ պատրաստուում։ գործածութիւնից ելած, խանգարուուած ժամացոյցները անօթների խաղալիքները որոնց որոգել տալը մասնաւոր մարդու ամենելին ենունտու չէ, այս տեղ զիւրին կերպով կրկին ործածական են գառնում։ Եւ այս ամէնը ոնտեսական օգուտից զատ այն մեծ քարտական արդիւնքն ունի աւելի, որ կարող է առաջ բերել աշխատութիւնը միայն ինքն ոտ ինքեան առած։ Խնչքան թեթեացնում նա խեղճ հիւանդների մարմնաւոր հոգեան վշտերը և տանելի գարձնում նոցա առաջ գորան արդարեւ անտանելի վիճակը։ Կտորտանքի տան մի մասը կարելի է սմարել նաև անկելանոցի լնդարձակ գրառնը, ուր ժողովրուում են մեծ քանակուեամբ հին կամ ընծայուած գրքեր ու պատրներ և վաճառուում։ Այլ և նամականիշը բաժինը, ուր արդէն ամիսզ աշխատանագան կողմերից գործածուած նականիշներ են հաւաքուում մեծ քանակուամբ։ Քսանի չափ հիւանդներ գոտում և ցանից ալբուներ են կազմում։ որոնք յայտ-է թէ ինչպէս յարգի են և ինչքան գը-հատուում են այժմ Եւրոպայում։ մասա-նգ հին հազուագիւտ նամականիշները, ոյց լաւ գին են տալիս և որոնցով մարդ կարգին վաճառականութիւն են անում, պէս որ անկելանոցի համար այս մասն էլ կտոր արդիւնաբերութեան միջոց չէ։

դժուար է մի առ մի թուել բեթէլ անկերանցի այն բոլոր առաւելութիւնները որոնք մեզ համար հետաքրքիր կարող են լինել և խրատական Ամէն մի շենք, գրեթէ ամէն մի բնակիչ այստեղ իւր պատմութիւնն ունի իրեմն խիստ սրաւաշարժ պատմութիւններ. Հերոսական համբերատարութիւն հիւանդների կողմից նոցա բարերարների և խնամողների առաքինութեան գեղեցիկ օրինակներ, ամբողջ հաստատութեան կեանքի համար նշանակութիւն ստացած միջնադեպեր են: Պէտք է ասել բողելշվինգ շատ յարմար տեղ է ընտրել իւր ձեռնարկութեան համար. Ճշակայքի ժողովուրդը յայտնի է իւր հեղ բարի բնաւորութեամբ և նիւթական օժանդակութեան հետ մէկ տեղ մատակարարում է անկելանոցին նորա համար անհրաժեշտ գործօն ոյժերը թէ ինչքան նշանակութիւն ունի այս կէտք՝ հարիւրաւոր պատրաստական իրենց կոչմանը յարմար մարդիկ ունենալ, հասկանալի է ինքն ըստ ինքեան: Խրերի ներկայ գրութիւնը Եւրոպայում որ ստիպում է բազմաթիւ կին մարդոց, մանաւանդ միջին և բարձր դասակարգներից, անամուսին կեանք վարել, մի մեծ առիթ է, որ նոցանից շատերը այնպիսի, իրենց բնաւորութեանը աւելի յարմար և իրենց անուանը պատուաբեր մի կոչումն ընտրեն, ինչպիսին է հիւանդապահի, սարկաւագուհու պաշտօնը: Աակայն այդ գաղափարական կոչման նուիրում էն իրենց ոչ միայն տշխարհից իրենց յոյսը կտրածները այլնաև անձնական բոլոր բարեմասնութիւններով օժտուած և ամենաաջօղ պայմանների մէջ գըտնուող օրիորդներ: Բերլինի մի մեծ հաստատութեան մէջ, ուր նոյնպիս սարկաւագուհիներ, ողորմած քոյրեր են պատրաստում մեղ պատմեցին մի գէպք, թէ ինչպիս մի պատմութիւն մի գէպք այդ կոչմանը առաջանալու համար աղջիկը եկեղեցում հօրոգերեալ քարոզը լսելով այս կոչման առաւելութիւնների և վսեմութեան մասին առևն գալուն պէս ցանկութիւն է յայտնում ողորմած քոյր գրուել և հակառակ ծնօղաց բո-

լոր թախանձանքին այդ ցանկութիւնն էլ իրագործումէ: Բողոքական եկեղեցիներն այս քոյրերին կուսութեան ուխտ կապել չեն ըստիպում այնպիս որ նոքա կարող են միշտ կրկին ամուսնական կեանքի մէջ մտնել, կատարելով ի հարկ է որոշ պարտականութիւններ գէպի իրենց խնամող և կրթող հաստատութիւնը (այդ կրթութիւնը ասրբներ է քաշում և թեթև չի նոտում): Յեթէլում ամուսնացած զօյգերին նշանակում են կոռուպարիչ և անտես անկելանոցի մէկ ու մէկ բաժնի մէջ՝ այնպիս որ նոքա շարունակում են կապուած մնող հաստատութեան հետ. սոքա են վերեւ յիշուած տներէցները: Թէ եղայրների և թէ քոյրերի բոլոր կինսական պիտոյքները հաստատութիւնը ինքն է հռոգում ի հարկ է, սմենակորեոր ծախքերի համար միայն մի նշան գումար վճարելով նոցաւ ևթէ նոցա յանձն առած ծանր աշխատանքն ի նկատի առնենք, պարզ է, որ այս տեղ դիմել կարող են մորդիկ մեծ մասամբ լոկ գաղափարական գգացումներից գրդուած միայն բաղդաւո՞ր չէ այն ժողովուրդը, որ հարիւրներով հազարներով այնպիսի անձնազոհ մարդիկ արտադրել կարող է: Ողորմած քոյրերը մանուանդ, որոնց թիւը օրլուտօրէ աճում է, մի անդնահատելի բարիք են քրիստոնեայ Եւրոպայի համար և վայելում են այնտեղ նաև իրենց տրժանի յարգը: Ամենակատաղի ազատամիտներ: Որոնք հրէշաւոր գոյներով են պատկերացնում հոգեւորականներին, ոչ մի որբութիւն ճանաչել չեն ուզում կամայ ակամայ ետ կքաշուեն, ճանապարհ կըանան, երբ փողոցում ողորմած քոյրերի պատկառանք աղդող հանգերձը երեայ: Անջնջելի է այն տպաւորութիւնը, որ թողնում է Բեթէլի գերեզմանոցում քոյրերի բաժինը. քոյլէ քոյլ հանգչում են նոքա այս տեղ, միաձեւ քոյրերի տակ ծաղիկներով, մշտականաշ ծառերով զարդարուած շիրիւներում: Խաղաղ և օրհնուած ամենքից, աւելի երջանիկ մի մահով քան ամենաարի զինուորներն են ունեցել պատերազմի գոյ-

գաշտում։ թէ եզրայրների և թէ քոյքերի բոլոր կեանքը ապահովում է առ հասարակ այն հաստատութիւնը, որին նոքա ծառա յել են։ Նոցանից ծերերի ուժասպառների համար տուանձին տնիկը կան ուր նոքա հանգիստ կերպով անդնումնեն իրենց վերջին օրերը, բնեթէլի ամենագեղեցիկ մասում բարձր հովասուն բլրի վերայ շինուած է Փելլա տունը, ուր խնամումնեն և առ ժամանակ ազատ շունչ քաշում հիւանդ և յոգնած եղբայրները։ Բացի սովորական միջին և հասարակ կրթութիւն ունեցող անձերից, այս տեղ գալիս են նաև բաւական թուով երիտասարդ տատուածաբաններ գործնական կեանքին և յատկապէս ներքին միախոնի վերաբերեալ գործունէութեան եղանակներին ծանօթանալու համար։ մի խիստ կրթիչ և բազմարովանդակ վարժութիւնն որին, իմ ժամանակը լրացած լինելով, ինքը ենթարկուել այլ ևս չէի կարող բայց գերմանիայում այժմ սւասնող Գարեգին սարկաւագն այդ յանձն տռաւ։ Այդ նպատակով մեր ուղղած գրութեան անկելանոցի վարչութիւնը մի սիրայիր նամակով պատուախաննեց, թէ նա յօժա րութեամբ այնտեղ կրնդունուի և ամէն խնամք կվայելէ, եթէ միայն տանել կոմինայ միւնքին հաւասար իւր վերայ գրուելիք բոլոր պարտաւորութիւնները։ Հիւանդներին խնամելու անքան գիշերներ անցնել ևն։ Պայմանն ընդունեցաւ և Գարեգին սարկաւագը անցեալ տարուայ աշնանային արձակուրդները Բեթէլում անցրեց, վերագառնալով այնաեղից, ինչպէս ինքը գրումէ, խիստ գոչ որրատով և կարեւոր փորձառութիւնների առատ պաշարով։ Երեխ նա ինքը մի ուրիշ անգամ աւելի մանրամասն տեղեկութիւններ առաջ կրերէ իւր սասացած փորձառութիւնից։ Բայ իս այդ փորձառութեան ամենակարեւոր և նոյն իսկ պատահական հանգիստեսնի համար իսկայն և եթ պարզուող կէտը այն վերին աստիճանի միթարական և ոգեսրիչ ապացոյցն է, թէ քրիստոնէութիւնը չէ կարող ամենելն մի երգուած երգ համար-

ուել ինչպէս ճառում ու երգում է տեղից վերկացող աղատամիար ամէն մի լուսաւորեալ ձեւացող հասարակութեան մէջ։ թէ նա գործումէ և այժմ օրըստօրէ ամող զօրութեամբ, մնալով միշտ այն միակ տպատանարանը, ուր ամէն վաստակեալ և բեռնաւոր խեղճեր մի քաղցր լուծի ներքոյ հանգստութիւն կդանեն։ Յարեգործութիւնը անկեալներին, տառապեալներին ցոյց տուած խնամքը, կարելի է առել այն գլխաւոր ոյժն է եղել որին պարտական է եկեղեցին իւր հին հեթանոս աշխարհի վերայ տարած յաղթանակը։ և այսօր էլ ունի ու գործ է գնում նա այդ անդիմագրելի ոյժը Յոդ հանրամարդկային գաղափարով տոգորուած քարոյագէտներ և իմաստակներ քարոզեն և ճառեն որքան կամենան ընդհանուր եղբայրութեան վերայ, նորա մարգու բնածին քաղաքակրթութեան հետ զարգացող յատկութիւն լինելը պնդեն։ իրողութիւնն այն է միշտ որ այդ բնածին յատկութիւնը Քրիստոսի աշխարհ գալուց առաջ մարդոց մէջ չէ եղել, ոչ նոյն իսկ Սոկրատների, Պլատոնների, Աննեքանների մէջ, և որ նա մինչեւ այժմ իսկ գործնական կերպով և բռւռն, կենդանարար զօրութեամբ քրիստոնէական եկեղեցւոյ հավանու ներքոյ միայն արտապատութիւն է գտել։ Եւ այդ իրողութիւնն է, որ կրկին կյաղթէ աշխարհին, և ոչ թէ մի երեւակայեալ բուգդայականութիւն կամ բնազանցական և բնապաշտական տեսութիւննեշաղախուած առասպեկներ։

— Այսպէս և Հայաստանեայց ու եկեղեցին։ եթէ նա կրկին բօլոր թափով ոտքի պէտք է կանգնէ և այն նշանակութիւնը ստանայ, ինչ որ ունէր լիքն Ներսէսի և Սահակների եկեղեցին, անհրաժեշտ պայմաններից մէկն է նա և, որ նա էլ առաջուաց պէս իւր անկերանոցներն ու աղքատանոցներն ունենայ։ ի՞նչ գեղեցիկ բան կլինէր, եթէ Մայր Աթոռը իւր 16 գարերի գոյութիւնը տօնելիս այսպիսի բարեգործական հաստատութիւններ ընծայ ստանար իրեն համար իրեն հաւասարիմ ժողովրդից։